Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 23-ի N 836 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Բնագավառը, օգտակար հանածոն, աշխատանքների փուլերը և օբյեկտի անվանումը	Աշխա-տանքների կատարման սկիզբը	Երկրաբանական առաջադրանքը 2009 թվականի համար	2009 թվականի ֆինանսավորման սահմանագումարը (հազ. դրամ) տարի
	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑ-ՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ այդ թվում՝			152200.0
1.	Գեղամա լեռների հյուսիսային և արևմտյան ստորոտների 1:50000 մասշտաբի երկրաբանական հանույթ (K–38-126-B, թ; K–38-138-Ը, ը, Թ, թ)	23.09.2003 թ.	դաշտային աշխատանքների շարունակություն, միջանկյալ հաշվետվություն ներկայացնելը (K – 38-138 – թ թերթը)	4000.0
2.	ՀՀ 1:50000 մասշտաբի երկրաբնապահպանական հետազոտություններ և քարտեզագրություն Երևան քաղաքում ու շրջակա տարածքներում (K-38-137- ը, թ; K-38-138- Ը, Թ թերթեր)	08.10.2007 թ.	կատարված աշխատանքների ամփոփում, Երևան քաղաքի և շրջակա տարածքների (K-38-137- ը, թ; K-38-138- Ը, Թ թերթեր) քարտեզները ներկայացնելը երկրաբանական միջավայրի գնահատմամբ և բնապահպանական միջոցառումների վերաբերյալ առաջարկությամբ	5000,0
3.	ՀՀ տարածքի էկզոգեն (արտածին) երկրաբանական պրոցեսների (սողանքների) մոնիթորինգի վարում և դրանց կադաստրի կազմում	08.10.2007 թ.	ՀՀ տարածքի էկզոգեն (արտածին) երկրաբանական պրոցեսների (սողանքների) մոնիթորինգի վարում, գույքագրում՝ ինժեներաերկրաբանական աշխատանքների կատարմամբ, ֆոնդային նյութերի հավաքագրում: Ներկայացնել միջանկյալ հաշվետվություն:	8000.0
4.	«Հայաստանի Հանրապետության պինդ օգտակար հանածոների հանքավայրերի վերաբերյալ կոմպյուտերացված տեղեկատվական համակարգի ստեղծում» ծրագրի երրորդ փուլ՝ Արկ Գիս (Arc GIS) միջավայրում ՀՀ (Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Կոտայքի մարզերի) մետաղական օգտակար հանածոների երևակումների վերաբերյալ կոմպյուտերացված տեղեկատվական համակարգի ստեղծում	25.08.2005 թ.	Արկ Գիս (Arc GIS) միջավայրում ՀՀ (Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Կոտայքի մարզերի) մետաղական օգտակար հանածոների երևակումների վերաբերյալ կոմպյուտերացված տեղեկատվական համակարգի ստեղծում (Արկ Գիս համակարգի միասնական տեխնոլոգիական պահանջների կիրառմամբ): Ներկայացնել միջանկյալ հաշվետվություն:	5000,0
5.	Կովկասի և հարակից տարածքների 1:1000000 մասշտաբի երկրաբանական ատլասի կազմում և «Կովկաս-Ղրիմ-Կարպատյան մարզերի երկրաբանական կառուցվածքը» նախագծի իրականացում	28.04.2008 թ.	Արկ Գիս (Arc GIS) համակարգի միասնական տեխնոլոգիական պահանջները բավարարող 1:1000000 մասշտաբի երկրաբանական քարտեզներ ներկայացնելը	10000.0
6.	Հայաստանի Հանրապետության տարածքում ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների թաղման նպատակով ընդերքի տեղամասերի տեղագրական քարտեզի կազմման աշխատանքներ	2009 թ.	վտանգավոր և թունավոր թափոնների երկարաժամկետ պահպանության համար հուսալի պահեստարաններ կառուցելու նպատակով բարենպաստ տեղամասերի առանձնացում, քարտեզների (1:10000 և 1:2000 մասշտաբներ) կազմում	120200.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ